Պաշտոնական ընդդիմախոսի կարծիք

Աշխեն Էդուարդի Ջրբաշյանի «Հայկական ոտանավորի տաղաչափական և ստրոֆիկական կառուցվածքի հիմնախնդիրներ» ատենախոսության վերաբերյալ

Տաղաչափագիտությունը գրականագիտության կարևորագույն բաժիններից մեկն է, սակայն վերջին տասնամյակներին այն մեզանում կարծես մի փոքր անտեսված էր: Ա. Ջրբաշյանի ատենախոսությունը ակնհայտ միտում ունի լրացնելու այս բացը՝ գիտական հանրույթի դատին հանձնելով այդ ուղղությամբ կատարված մեծածավալ մի աշխատանք, որն իր առանցքային շեշտադրումներով կարող է ուղենիշ դառնալ հայ բանաստեղծական ժառանգության հետագա ուսումնասիրության համար: Ատենախոսությունը նվիրված է հայկական ոտանավորի տաղաչափական և ստրոֆիկական առանձնահատկությունների քննությանը՝ ընդգրկելով հայ պոեզիայի զարգացման տարբեր շրջափուլերն ու դրանցում ի հայտ եկած կարևորագույն միտումները:

Նախքան հայկական ոտանավորի տաղաչափական բուն քննությանն անցնելը ատենախոսն աշխատանքի առաջին գլխում («Հայ տաղագիտության պատմության փուլերը») մանրակրկիտ վերլուծության է ենթարկում մինչաբեղյանական տաղաչափագիտությունը, ինչպես նաև Մանուկ Աբեղյանի տեսությունն ու դրան ուղղված քննադատությունը: Աշխատանքում համոզիչ փաստերով ցույց է տրվում, որ 19-րդ դարում Մխիթարյանների կողմից արդեն ձևավորվել էին այն հիմնական սկզբունքներն ու չափանիշները, որոնցով առաջնորդվել է հայ տաղաչափագիտությունն ընդհուպ մինչև մեր օրերը. այդ շրջանում է աշխուժացել նաև հետաքրքրությունը հայ հին բանաստեղծության, նրա կառուցման սկզբունքների ու ձևերի նկատմամբ: Ա. Ջրբաշյանի տեսադաշտում են Բագրատունու, Այտընյանի, Գաթրճյանի, Սուքրյանի, Զարբհանալյանի, Տիրոյանի, Բահաթրյանի և այլ բանասերների աշխատություններ, որոնցում մշակվել են տաղաչափական մի շարք հիմնարար դրույթներ: Ատենախոսն իրավամբ նկատում է, որ այդ շրջանում մեզանում դրվում են համեմատական տաղաչափագիտության հիմքերը, նաև առաջ է քաշվում հայկական ոտանավորի վանկական բնույթի վերաբերյալ վարկածը: Աշխատանքում

առանձին ենթագլուխ է նվիրված Արսեն Բագրատունու հայկական չափի տեսությանը և դրա պրակտիկ իրացմանը մեր ազգային բանաստեղծության մեջ:

Հայ տաղաչափագիտության պատմությանը նվիրված այս գլխի շնորհիվ ատենախոսությունը ձեռք է բերում հատուկ արժեք ու նշանակություն, քանի որ առաջին անգամ ամբողջական տեսքով ներկայացվում են հայկական ոտանավորի բնույթին, նրա կառուցվածքային առանձնահատկություններին, հանգավորման, շեշտադրության, անդամահատման սկզբունքներին վերաբերող հիմնական տեսակետները, տաղաչափական խնդիրներին նվիրված աշխատությունները և մի շարք հարցերի շուրջ ծավալված բանավեճերը: Այստեղ առանձին ենթագլխով ներկայացված են նաև Մանուկ Աբեղյանի «Հայոց լեզվի տաղաչափություն (մետրիկա)» և այլ աշխատություններում շրջանառվող հիմնարար դրույթները, ինչպես նաև հայկական ոտանավորի շեշտային բնույթի վերաբերյալ աբեղյանական տեսության քննադատությունը: Կարելի է պնդել, որ առաջին անգամ մեր գրականագիտության մեջ համակարգված և գրեթե ամբողջական ձևով ներկայացվում են հայ տաղաչափագիտության ամենանշանակալի դեմքերի գիտական հայացքներն ու մոտեցումները, ցույց են տրվում դրանց տեսական ու պատմական հիմքերը, պրակտիկ իրացումները պոեզիայում և ազդեցությունը տարբեր փուլերի գրականագիտական հայացքների վրա:

Ատենախոսության երկրորդ գլխում («Հայ պոեզիան տաղաչափական քննության լույսի ներքո») Ա. Ջրբաշյանը տեսական հարցադրումներից անցում է կատարում մեր բանաստեղծության բուն տաղաչափական քննությանը՝ վեր հանելով մեր պոեզիայի տարբեր փուլերի առանձնահատկությունները, այլ լեզուներից կրած ազդեցությունները, տաղաչափական նոր ձևերի որոնումներն ու տարբեր հեղինակների ներդրումը չափական նոր սկզբունքների ձևավորման գործում:

Աշխատանքի այս գլուխն ամենածավալունն է. այստեղ քննության են ենթարկված մեր պոեզիայի զարգացման տարբեր փուլերի (հին, միջնադարյան, կլասիցիստական, նոր շրջան, արդի շրջան) տաղաչափական կառուցման եղանակները, դրանց զարգացման ու փոփոխման տրամաբանությունը, միջանկյալ կամ անցումային ձևերի ի հայտ գալը, ինչի շնորհիվ ժամանակի ընթացքում առաջանում են տաղաչափական նոր միտումներ և

բանաստեղծության ձևավորման նոր եղանակներ: Աշխատանքում առաջին անգամ կոնկրետ օրինակներով ցույց են տրվում արևմտահայ և արևելահայ բանաստեղծության տաղաչափական տարբերությունները, որոնք արտահայտվում են շեշտադրության, անդամահատման և բառաբաժանման սկզբունքներում և արդյունք են չափական նույն ձևերի ռիթմական տարաբնույթ իրացումների: Ատենախոսը ներկայացրել է նաև այդ խնդիրների շուրջ եղած մի շարք տեսակետներ՝ համոզիչ փաստարկներով վիճարկելով դրանք: Ուշագրավ է, որ արևելահայ և արևմտահայ պոեզիաները Ա. Ջրբաշյանը ծագումնաբանորեն կապում է բանաստեղծական տարբեր ավանդույթների հետ՝ միևնույն ժամանակ ցույց տալով, որ այդ տարբերությունները 20-րդ դարասկզբից սկսում են ջնջվել ու համահարթեցվել, իսկ շատ դեպքերում՝ միտումնավոր կերպով յուրացվել:

Ատենախոսության մեջ քննության են ենթարկվել նաև ազգային տարբեր գրականությունների և դարաշրջանների բանաստեղծական փորձի յուրացման ինքնատիպ դրսևորումները, մասնավորապես՝ հին հայկական տաղաչափության, ժողովրդական բանահյուսության, նաև դասական բանաստեղծության ազդեցությունը նոր և նորագույն շրջանի հայ պոեզիայի վրա: Հետաքրքիր նյութ են տալիս Ե. Չարենցի պոեզիայում տաղաչափական տարբեր շերտերի վերհանումն ու քննությունը. առաջին անգամ համակողմանիորեն ներկայացվում են հեկզամետրային չափերի կիրառության եղանակները Չարենցի դիստիքոսներում և մոնոստիքոսներում: Արժեքավոր է նաև «Գիրք ճանապարհի» ժողովածուի պոեմների տաղաչափական քննությունը. այդ պոեմներում ատենախոսը ներկայացնում է և՛ վանկական ոտանավորի կանոնավոր չափեր, և՛ համաշեշտ ու ազատ ոտանավորի սկզբունքներով գրված պոեմներ, նաև դրանց ինքնատիպ էվոլյուցիան և միջանկյալ ձևերի առաջացումը: Այստեղ տեսանելի օրինակներով ներկայացվում է, թե ինչպես են տարբեր գործընթացների արդյունքնում առաջ գալիս բանաստեղծության կառուցման այնպիսի ձևեր, որոնք մինչ այդ չեն եղել մեր պոեզիայում և անգամ ինչ-որ իմաստով խորթ են եղել նրան: Այս համատեքստում քննելով Դ. Վարուժանի բանաստեղծական ամբողջական ժառանգությունը՝ նույնատիպ գործընթացներ են վերհանվում նաև արևմտահայ պոեզիայում:

Ատենախոսը կոնկրետ օրինակներով ցույց է տալիս, թե ինչպես է նոր և նորագույն գրականությունը հարստացել հին հայկական բանաստեղծության և ժողովրդական պոեզիայի տաղաչափական ձևերի յուրացման ճանապարհով՝ ներկայացնելով այդ միտումները Ե. Չարենցի և Ավ. Իսահակյանի ստեղծագործության մեջ: Մասնավորապես՝ Իսահակյանի ոչ միայն առաջին ժողովածուն, այլև նրա հետագա ողջ ստեղծագործությունն իր գերակշիռ մասով բխում էր ժողովրդական պոեզիայի տարերքից և ընթանում էր նրա պատկերավորման միջոցների, տաղաչափական ձևերի յուրացման ճանապարհով: Ինչ վերաբերում է Չարենցին, ապա ատենախոսը վկայակոչում է ոչ միայն վերջինիս խոստովանությունը, որ ինքը հաճախ է սնվել մեր միջնադարյան տաղերգուներից, այլև կոնկրետ օրինակներով ցույց է տալիս, որ Չարենցի համար մեր հին և միջնադարյան պոեզիան տաղաչափական ձևերի, հանգավորման եղանակների, խոսքի արտահայտչականության կարևորագույն գանձարան էր, որից նա կարող էր անսպառ նյութ քաղել: Եվ 20-ական թվականներից հետո Չարենցի պոեզիայում վանկական չափերի և դրանցում երկար՝ 6-վանկանի անդամների գերակշռությունը Ա. Ջրբաշյանը կապում է հենց այդ ազդեցության հետ:

Աշխատանքում հատկապես հետաքրքիր է արդի հայ բանաստեղծության տաղաչափական ձևերի քննությանը նվիրված հատվածը: Այստեղ ատենախոսն անդրադարձել է վերջին տասնամյակներին մեր բանաստեղծության աչքի ընկնող մի շարք դեմքերի գրական ժառանգությանը՝ վեր հանելով տաղաչափական այն ընդհանրությունները, զարգացման միտումներն ու նորանոր ձևերը, որոնք առաջացել են այդ շրջանի բանաստեղծների երկերում: Դրանցում կարելի է հանդիպել ինչպես հայ պոեզիայում լայն տարածում ունեցող վանկական չափերի, այնպես էլ ազատաչափ, համաշեշտ, նաև վանկական համակարգերի սահմաններում առաջացած նոր ու ինքնատիպ ձևերի: Մեր նորագույն պոեզիայի տաղաչափական այդ աննախադեպ բազմազանությունն ատենախոսը բացատրում է բուն հայկական և օտար ազդեցություններով. մասնավորապես՝ ազատ ոտանավորի աշխուժացումը նա կապում է մի կողմից մեր միջնադարյան պոեզիայից, հատկապես Նարեկացուց եկող ակնհայտ ազդակների հետ, մյուս կողմից՝ համաշխարհային պոեզիայում 19-20-րդ դդ. լայն

տարածում գտած ազատաչափի, որը խթան է դարձել բանաստեղծական միանգամայն նոր որակների ձևավորման համար: Ատենախոսը վերջին տասնամյակների այս լրջագույն փոփոխությունները բացատրում է գերազանցապես բանաստեղծության ձևի և բովանդակության «ազատականացման» մղումներով, որոնք ուղեկցվում են նաև նորարարական շարունակական որոնումներով՝ ի հայտ բերելով տաղաչափական ձևերի ինքնատիպ տարատեսակներ:

Ատենախոսության երրորդ գլուխը («Հայ պոեզիայի ստրոֆիկական կառուցվածքի հիմնախնդիրներ») վերաբերում է մեր բանաստեղծության կոմպոզիցիոն և տնային կառուցվածքի հետ կապված մի շարք հարցադրումների, բանաստեղծական կայուն ձևերի գործառույթներին: Այստեղ Ա. Ջրբաշյանը փորձում է ի մի բերել չափածոյի ստրոֆիկական դասակարգման շուրջ առաջ քաշված հիմնական տեսակետները՝ առաջարկելով դասակարգման իր ուրույն մոտեցումը: Պետք է նշել, որ աշխատանքում առաջին անգամ մեր գրականագիտության մեջ ի մի է բերվել հայկական սոնետի գրեթե ամբողջական պատմությունը՝ սկսած առաջին նմուշներից մինչև մեր օրերում դրա դրսևորումները: Հենվելով գրականագիտության մեջ սոնետի վերաբերյալ շրջանառվող տեսակետների վրա՝ ատենախոսը փորձում է բացահայտել նաև բանաստեղծության կայուն ձևերի տրամաբանությունն ու փիլիսոփայական հայեցակարգը՝ իբրև օրինակ վերցնելով Ե. Չարենցի կիրառած ձևերը (սոնետ, տրիոլետ, ռուբայի, գազել, դիստիքոս, մոնոստիքոս և այլն): Կոնկրետ օրինակներով ցույց է տրվում, թե ինչպես է բանաստեղծական բովանդակությունը մարմնավորվում տվյալ ձևի մեջ, կամ ինչպես է բանաստեղծության կառուցվածքը նպաստում տրամադրության, մտքի կամ գաղափարի արտահայտմանը: Ուշագրավ է, որ Ա. Ջրբաշյանը փորձում է գտնել նաև համանման դրսևորումներ համաշխարհային պոեզիայում՝ ցույց տալով հայ իրականության մեջ այդ նույն երևույթների ծագումնաբանությունը:

Բանաստեղծության կառուցվածքը նաև հիմք է դառնում ժանրային ձևավորման համար, և ատենախոսն իբրև օրինակ դիտարկել է Հովհ. Թումանյանի և Ավ. Իսահակյանի քնարաէպիկական երկերից բալլադների ու լեգենդների տնային կառուցվածքը՝ ներկայացնելով, թե ինչպես է բալլադի պատմողական բովանդակությունն արտահայտվում

տնային տարբեր չափերի ու ձևերի մեջ: Նույն կերպ և հանգը՝ իբրև բանաստեղծության կազմակերպիչ գործոն, Ջրբաշյանի դեսադաշտում է. նրա քննության առարկան դարձել է Համո Սահյանի պոեզիայում հանգավորման ձևերի բազմազանությունը:

Ատենախոսության մեջ շրջանառվել է թեմային առնչվող հայալեզու գրեթե ողջ նյութը՝ սկսած 18-րդ դարի աշխատություններից մինչև մեր օրերը: Ա. Ջրբաշյանն օգտվել է պոեզիայի տաղաչափական կառուցվածքի խնդիրներով զբաղվող ռուս նշանավոր գրականագետների մենագրություններից և հոդվածներից, օտարալեզու մի շարք աշխատություններից: Օգտագործված գրականության ցանկը հարուստ է և համապատասխանում է ընդգրկված բնագրային ու տեսական նյութին: Աշխատանքի եզրահանգումները համոզիչ են և բխում են բուն շարադրանքից:

Բարձր գնահատելով կատարված մեծ աշխատանքը՝ այնուհանդերձ, ունենք մի քանի առաջարկներ ու դիտողություններ, որոնք, հույս ունենք, ատենախոսը հաշվի կառնի այս թեմային վերաբերող հետագա ուսումնասիրություններում.

1. Մեզ համար ավելի ընդունելի է *տաղաչափագիտություն* եզրույթը *տաղագիտության* փոխարեն. կարծում ենք՝ այն ավելի հստակ է արտացոլում գիտաճյուղի էությունը, այնինչ տաղագիտությունը կարող է ընդգրկել չափածոյի հետ կապված մի շարք այլ ոլորտներ:

2. *Ազատ սպանավոր* եզրույթը՝ իբրև *վեղիբրի* հայերեն տարբերակ, մեր կարծիքով, հաջողված չէ. ավելի ընդունելի ենք համարում *ազատչափը*, որը կիրառել են Դ. Վարուժանը և արևմտահայ մի շարք բանաստեղծներ:

3. Արդի հայ պոեզիայի տաղաչափական առանձնահատկությունները քննելիս, կարծում ենք, ճիշտ կլիներ ընդգրկել նաև այնպիսի բանաստեղծների, ինչպիսիք են Սոնա Վանը և Խաչիկ Մանուկյանը, որոնք աչքի են ընկնում բանաստեղծական անուրանալի ձիրքով, և նրանց ստեղծագործությունը կարևոր տեղ է զբաղեցնում արդի հայ պոեզիայում:

4. Եղիշե Չարենցի երկերի տաղաչափական քննությունը կատարվել է բավական հանգամանալի՝ վեր հանելով բանաստեղծի վարպետության մի շարք նոր կողմեր, և մեր կարծիքով՝ նպատակահարմար կլիներ մեկ միասնական գլխով ներկայացնել Չարենցի տաղաչափությունը, ոչ թե առանձնացնել տարբեր գլուխներում:.

Նշված դիտողությունները, սակայն, ամենևին չեն ստվերում կատարված մեծ աշխատանքը:

Հրապարակված գիտական հոդվածները, մենագրությունն ու սեղմագիրը արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները:

Եզրափակելով՝ կարելի է արձանագրել, որ Աշխեն Էդուարդի Ջրբաշյանի՝ «Հայկական ոտանավորի տաղաչափական և ստրոֆիկական կառուցվածքի հիմնախնդիրներ» թեմայով ատենախոսությունը լիովին համապատասխանում է դոկտորական ատենախոսություններին ներկայացվող գիտական պահանջներին, ունի տեսական և գործնական լուրջ նշանակություն, և հեղինակն արժանի է իր հայցած՝ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ժ.01.04 - «Գրականության տեսություն» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝ Դավիթ Գասպարյան

բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

18. 06. 2026

Ստորագրությունը հաստատում եմ
Պատմության ինստիտուտի գիտքարտուղար
պ.գ.թ., դոցենտ Հ. Լևոնի հարկ հանդիսացող
18.06.2026թ.